

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻՈ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին ամբող-
ջովիկ կամ մասամբ:
Իրականացման տողը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ՅՈՒԹ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Մեր մէջ արմատացած ամենա-
յոռի սովորութիւններէն մէկն է
անշուշտ թրքերէն լեզուի այն ան-
նպատակ եւ անպատուարեր գոր-
ծածութիւնը, որուն կը հանդի-
պինք ամեն տեղ եւ ամեն դասա-
կարգի մէջ:

Խօսքերնիս իրենց մայրենի լե-
զունն անգիտակ, բոլորովին թրք-
քախօս հայ գաղթականներու վրայ
չէ: Ասոնք թրքեա կարենան զի-
րենք արդարացնելու բնոյթ ունե-
ցող պատճառներ առաջ բերել ի-
րենց թրքախօսութեան: Սակայն
պարզապէս անարդարանալի են ա-
նոնք որոնք իրենց մայրենի լե-
զունը չա՛տ լաւ գիտեն, ամեն դի-
մութեամբ կը խօսին, մինչեւ իսկ
ազգային կրթական հաստատու-
թեանց մէջ ուսում ստացած են,
ու հայերէնի հետ յաճախ թրքե-
րէնն ալ կը գործածեն: Տեսակ մը
ճաշակ զարգացած է ասոնց մէջ որ
կը պահանջէ խստիկ թրքերէնի
կիրառութիւնը մասնաւոր պարա-
գաններու եւ որոշ դէպքերու, զը-
խաւորապէս առեւտրական խօսակ-
ցութեան մէջ: Վերջին գաղթա-
կանութիւնը, որ տարածուեցաւ
Պուլկարիոյ գրեթէ ամեն կողմը,
իր հետ տարաւ այս սովորութիւնը
ամեն տեղ:

Ընդուն մարդուն համար միջոց
մըն է իր միտքը արտայայտելու,
այս տեսակէտով այսինչ կամ այն-
ինչ լեզուի կիրառութիւնը ինքնին
կարեւորութիւն չունի: Անոնց գոր-
ծածութեան մէջ սակայն, խտիրը
կը դնենք եւ պէտք է որ դնենք,
քանի որ գրեթէ ամեն ազգ ունի
իր տոհմային առանձին լեզուն,
որ կը նկատուի իրաւամբ ազգու-
թեան նշաններէն մին եւ անոր պահ-
պանման ազգականներէն մին եւ գու-
ցէ գլխաւորը, Այս պատճառով է
որ իրենց ազգային գիտակցու-
թեան մէջ ամենէն յառաջացած
ժողովուրդները, իրենց մայրենի
լեզունն գործածութեան եւ նոյն
իսկ օտար տարրերու մէջ տարած-
ման ամենէն նախանձախնդիրներն
են: Թրքերէնի յաճախ գործածու-

թիւնը այդ գիտակցութեան նուա-
զութիւնը, այդ նախանձախնդրու-
թեան պակասը ցոյց կուտայ ու-
րեմն: Ոչ միայն այդչափ: Թրք-
քախօսութեան հակումը, որ եթէ
չեմ սխալիր, Արեւելքի եւ ոչ մէկ
քրիստոնեայ ժողովուրդին մէջ այն-
քան ընդհանրացած է որքան մեր
մէջ, կը նշանակէ թէ թրքական
բարքերու եւ սովորութեանց պատ-
կառելի չափ մը խառնուած է մեր
խմորին մէջ, այնպէս որ ոչ միայն
թուրքիոյ մէջ բնակող, կամ ան-
կէ նոր գաղթած հայեր, այլ եւ
նոյն իսկ անոնք որ 5-10-20 տա-
րիներէ ի վեր թողած են այդ եր-
կիրը, կարող կըլլան դիմադրել
թրքախօսութեան զօրաւոր ճաշա-
կին:

Ազգ. դպրոցները, թէեւ բար-
ւոքման շատ ու շատ կարօտ, տա-
կաւ կը պակսեցնեն թրքախօսու-
թեան սովորութիւնը: Բայց եթէ
այդ պարտականութիւնը միայն
դպրոցներէն չէ, այլ նաեւ ամեն
հայախօս հայուն եւ ամենէն առաջ
քիչ կամ շատ դպրոց տեսած ու
գիրք թղթատած այն դասակար-
գին, որուն համար թրքախօսու-
թիւնը պարզապէս ամօթ մըն է,
թէեւ այնպէս չէ նկատուեր, մեր
մէջ սովորական դարձած ըլլալով:

Մեր պաշտօնակիցներէն մէկը
վերջերս կը գտնատեսէր վառնայի
դպրոցական աշակերտներուն թրք-
քախօսութեան դէմ, որուն վրայ
ուսուցիչներուն ուշադրութիւնը կը
հրաւիրէր: Շատ իրաւացի: Բայց
տակի մեղադրելի չէ՛ն այն չափա-
հաս մարդիկ որոնք քով գիտնա-
լով հանգերձ իրենց մայրենի լե-
զուն, յաճախ անոր տեղ թրքե-
րէնը դնելու յոռի սովորութեան
կը հետեւին: Փոքր ճիգ մը իրենց
կողմէն պիտի բաւէր զայն բնա-
լին ընելու: Զարծե՛ր արդեօք
խոշոր դուրծերու մէջ միայն պի-
տի շտրուակինք մեր ազգասիրու-
թիւնը ցոյց տալու ջանալ: Զէ՛ որ
պրոֆիկին մէջ թիրացողը մեծին
մէջ նոյպէս կը թերանայ անվը-
րէպ:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԲԸ

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԵՋ

(Շար. Ասխորդ թիւն եւ վերջ)

Այո՛, գիտական, արհեստա-
վարական կրթութիւն մը պէտք
է տալ մեր տղոց, եւ այդ ոչ թէ
զանոնք գիտուններ, արհեստա-
գէտներ ընելու համար այլ այդ
բոլորին պատրաստելու, անոնց
ճշմարիտ կրթութիւնն ու դաստի-
արակութիւնը ջամբելու, զանոնք
ներկայ կեանքի եւ միջավայրի պա-
հանջներուն գիտակից ընելու հա-
մար: Ենթադրենք որ բոլոր այն
գիտական եւ արհեստագիտական
ժանօթութիւնները որոնք մեր տը-
ղոց կուզենք տալ ուղղակի օգտա-
կարութիւն մը չունենան, կեանքի
մէջ բանի մը պէտք չըլլան եւ ա-
շակերտի յիշողութեան անոնք բո-
լորն ալ ջնջուին, դարձեալ անոնք
իրենց մեծ օտուտը կունենան: Ո-
րովհետեւ գիտական կրթութեան
շնորհիւ աշակերտին դատողու-
թեան ստացած ճշգրտութիւնն եւ
ուժը կը մնան անջինջ:

Ուրեմն զարմանալի կամ աւե-
լորդ չէ որ իբրեւ գիտական կըր-
թութեան դասեր բնական գիտու-
թիւններէ յետոյ կամ անոնց հետ
երկրագործութեան ուսումնալ մեր
տղոց համար անհրաժեշտ համա-
րեմ եւ զայն աւանդելու եղանակի
մասին քանի մը խօսք ընեմ: Ար-
դէն յիշեցի որ մեր ժողովրդի մե-
ծածականութիւնը երկրագործ է եւ
այդ արհեստով չլքողողներն ալ
կապին բացարձակապէս երկրա-
գործական երկիրներու մէջ, ուր
ահագին ապագայ ունի այդ ար-
հեստը: Ուրեմն կենսական պա-
հանջ է մեր տղոց երկրագործու-
թեան նախնական ծանօթութիւն-
ներն տալ, արհեստի սէրն ներ-
շնչել, որպէս զի անոնք ոչ ուս-
պարէզը բոլորովին չլքանեն, օ-
տարներու չթողուն:

Նախակրթարաններու մէջ չէ որ
մասնագէտներ պիտի պատրաստ-
ուին, հոն՝ ամեն արհեստի եւ գի-
տութեան միայն նախնական ծա-
նօթութիւնները եւ ճաշակը կը

տրուին տղոց որպէս զի անոնք ի-
րենց բնական ճգնաժամներուն հա-
մեմատ ընտրեն իրենց յարմար դա-
տած մասնագիտութիւնը եւ ար-
հեստը եւ զանոնք գիտութեամբ
մշակեն: Ուրեմն մեր վարժարան-
ներու մէջ աւանդուելիք երկրա-
գործական դասերը պիտի կայա-
նան մի քանի պարզ եւ բաւական
ընդհանուր գիտական ծանօթու-
թիւններու մէջ, որոնցմով աշա-
կերտը պիտի կրնայ գաղափար
կազմել բոյսի մը կամ կենդանիի
մը կեանքին ներկայացուցած բը
նախօսական գլխաւոր երեւոյթնե-
րուն վրայ: Բայց ինչ որ ամենէ
կարեւորն է պիտի սիրէ արհեստը,
դաշտի եւ գիւղի մաքուր եւ առողջ
կեանքը:

Երկրագործութիւնն գիտութիւն
մըն է եւ բարձր գիտութիւն մը,
իւրաքանչիւր երկրագործական եւ
րեւոյթ հետեւանք մըն է օրէնք-
ներու որոնք կը գտնուին ու կը
մեկնուին բնական պատմութեան,
Շմիի եւ Ֆիզիքի մէջ: Ուրեմն
երկրագործական ուսումը կարելի
չէ բաժնել բնական գիտութիւննե-
րու դասերէն, անոնց հետ համըն-
թաց աւանդելու է զայն, ինչպէս
կընեն Գերմանիոյ, Զուիցերիոյ,
Ֆրանսայի եւ այլ երկիրներու յախ-
նական վարժարաններու մէջ:

Բայց ինչպէս բոլոր գիտու-
թիւններն երկրագործութիւնն ալ
գրքերու մէջէ տեսականօրէն կա-
րելի չէ ուսուցանել եւ արդէն նա-
խակրթարաններու մէջ աւանդուե-
լիք այդ դասերը պէտք չէ որ այն-
քան տղուն յիշողութեան հետ գործ
ունենան, որքան անոր իմացակա-
նութեան հետ, եղանակին համե-
մատ երկրագործական կեանքի վը-
րայ եղած դիտողութիւններով եւ
պարզ փորձերու միջոցաւ պէտք է
աւանդուին այդ դասերը, եւ գոր-
ծողութիւններու «լինչու» պէտք է
հասկցնել տղոց: Եւ երեւոյթներու
մեկնութեան հետ մէկտեղ, առանց
միջոցներու մանրամասն նկարագ-
րութիւններն ընելու, մշակելի բոյ-
սերուն զարգացման պայմանները,
երկրագործական գործողութեանց
պէտքը, ընտանի կենդանիներու եւ
մարդուն առողջապահութեան պայ-

մանները, ահա ինչ որ սորվեցնե-
լու է մեր տղոց երկրագործական
դասերու մէջ. և այդ ինչպէս ըսի
միայն փորձառական մեթոտով կա-
րելի է ուսուցանել, իսկ այդ բա-
նին համար անպատճառ տիպար
ազարակ մը հարկաւոր չէ, փոր-
րիկ բակ մը, պատառ մը հողով,
քանի մը թաղարով. կը բաւէ մեր
դասերու պահանջած փորձերուն
համար, եթէ մօտակայ արտերու
և ազարակներու երբեմն այցելու-
թիւններ ալ տրուին վարժարաննե-
րու մէջ գտնուած սերմերու և ար-
մատներու հաւաքածոյին հետ կը
լրացնեն ամեն պահանջը:

Այսպէս կանոնաւոր և մէթո-
տով աւանդուած երկրագործական
դասերու նպատակը կրկին է,
առաջին տալ ազգային երկրագոր-
ծական ասպարէզն ընտրել ուղղոյ
աշակերտներուն հարկ եղած նախ-
նական ծանօթութիւններն, անոնց
ներշնչել դաշտի և գիւղական կեան-
քի սէրը՝ մասամբ կուռելու հա-
մար գիւղերէն մեծ քաղաքները,
մեծ կեդրոնները գաղթելով հոն
ֆիզիքայէս, բարոյապէս փճանա-
լու մեծ չարիքին դէմ, որ ոչ մի-
այն մեր ազգին այլ եւրոպական
մեծ ժողովուրդներու կեանքին կը
սպառնայ:

Երկրագործական կրթութիւնը
իրեւելի գիտութիւն անշուշտ եւ որ
բարեբար և իրական ազդեցու-
թիւն մը պիտի ընէ մեր տղոց
վրայ. նա անոնց սիրտն և միտքն
միանգամայն պիտի աշխուսեցնէ,
տալով անոնց գիտական ճշմարիտ
ծանօթութիւններ, առողջ ու վեհ
զգացումներ:

Պ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆիլիպէ 28 Սեպտ.

Ամսոյս 20ին կիրակի առաւօտ հասա-
րակաց մեծ պարտէզին մէջ տեղի ու-

ՋՈՀՈՒԱԾ ԶԵՌՔԸ

(Թարգմանութիւն պոլիգրաֆիկէն)
(3)

— Ես չեմ կրնար համաձայնիլ եւ ըն-
դունիլ ձեր առաջարկած գործողու-
թիւնը, որովհետեւ բան մը չկրցի գըտ-
նալ, արդարացնելու ձեր փափաքը —
կ'ըսէր Տօքթէօնը դառնալով մէկ մը Տի-
կինին մէկ մ'ալ այն պարտին, որ
բոլորովին պաղ նայուածքով կը գիտէր
զայն վերէն ի վար:

— Մենք ալ շատ հեռու ենք հաստա-
տելէ թէ այս ձեռք հիւանդ է —, պա-
տասխանեց պարոնը: — Բայց ասով
հանդերձ պէտք է որ կտրուի եւ կ'ա-
ղաչենք ձեզի որ անմիջապէս սկսիք
ձեր գործողութեան:

— Ես ալ ձեզի կը յայտարարեմ թէ,
եւ ոչ մէկ երկրաւոր գորութիւն կրնայ
ստիպել զիս —, պոտաց Տօքթէօնը Ս.:
— Իմ ծառայութիւններս նուիրուած
են միայն տառապեալ մարդկութեան
համար, երբեք չպիտի թողարտեմ գոր-
ծիք ըլլալու անուրբ բռնութեան մը: —

Տօքթէօնը կը մտածէր թէ, իր խօս-
քերուն մէջ այս տեսակ շեշտ մը գոր-
ծածելով, պիտի կրնար ներգործել իր

նեցաւ քաղաքիս արհեստական մրցու-
մին բացումը: Ներկայացուած բոլոր
ապրանքները ի ցոյց դրուած էին ըն-
դարձակ քաղկեդէնի մը մէջ: Հարաւա-
յին Պուլկարիոյ ամէն քաղաքներէն գա-
նազան դասակարգի արհեստաւորներ
իրենց հանձարին ճարտարութիւնները
թափած էին յաջողակ մասնակցութիւն
մը ունենալու համար այս տարուան
մրցումին: Ուրախալի է ըսել որ հայ
արհեստաւորներու թիւը՝ ստուար մե-
ծամասնութիւն մը կը կազմէր բոլոր
մասնակցողներու մէջ, ամենքն ալ դե-
րազանցապէս արժանի գնահատման:
Հայ կիներն անգամ աշխատած էին
պատուաւոր բաժին մը ունենալ հոն:
Յիշատակութեան արժանի է Օր. Հա-
րենցի մէկ ասեղնագործութիւնը որ կը
ներկայացնէր տարիներու ծանրութեան
տակ ընկճուած տերեւագուրկ ծառ մը.
կիրթ ճաշակի եւ նուրբ արուեստի
ճշմարիտ գլուխ գործող մը. կարող եւ
ճաշակաւոր արհեստագէտի գործեր էին
նաեւ Օր. Հայկանուշ Պէրպէրեանի եւ
Տիկին Տէր-Սալաւուրեանի ի ցոյց դը-
րած արեւելեան հաստապուր եւ դեղի-
ցիկ գորգերը: Բայց Հայ արհեստաւոր-
ներու մէջ գլխաւոր տեղը կը գրաւէին
ներկարար Գրեգ-Քէսէրեան եղբայր-
ները, որոնք երկու տարիէ ի վեր Ֆի-
լիպէի մէջ գործարան մը հաստատած
են եւ եւրոպական ամենանորանոր մե-
թոտներով հաստատուն ու գեղեցիկ
գոյներով մանած կը ներկեն, եւ որոնք
իրենց արհեստին գրեթէ միակ ներկա-
յացուցիչն էին: Գրեգ-Քէսէրեան եղ-
բայրները՝ որոնք ի պահանջել հարկին
ամբողջ Պուլկարիոյ սպառումը կրնան
հայթայթել, նիւթական քաջալերու-
թեան կը կարօտին իրենց գործն ըն-
դարձակելու համար: Պուլկար կառավա-
րութիւնը որ առաջին մրցանակ եւ
Տիքթօն s'Ordon շնորհեց, կը յուսանք
թէ նկատի կ'առնէ այս կէտը, որով-
հետեւ հրկիրը մեծ շահ մը ունի անոր
մէջ եթէ եւրոպական ներկով մանած-
ները չի կրնան Պուլկարիա մտնել:
Նուրբ արուեստի գործ էր նաեւ Տ.
Կիւմրեւեանի ներկայացուցած գունա-
ւոր արհեստական մարմարիները ո-
րոնցմով յարգելի արհեստագէտը երբեմն
Պոլսոյ Սուլթաններուն պալատները
զարդարած է:

Շատ երկար պիտի ըլլար եթէ մի
առ մի թուէինք մրցումի ներկայացող

հակառակորդներուն զգացմանց, որով
պիտի փոխեն իրենց որոշումը, բայց կը
սխալէր: Որովհետեւ բոլոր խօսակցու-
թեան միջոցին իր խօսակցին չրթուե-
ներուն վրայ տեսնուած ցուրտ եւ ազ-
դու ծաղրը չանհետացաւ, այլ ընդհա-
կառակը աւելի հեզնական արտայայ-
տութիւն մը ցոյց տուաւ եւ յարեց:

— Կը կրկնեմ ձեզ, գործողութիւնը
պէտք է կատարուի բայց չըլլայ որ ե-
րեւակայէք թէ ո' եւ է բռնութիւն կը
գործածուի, դուք թերեւս կը կարծէք
թէ աւազակներու խումբ մը հոս բերած
է ձեզի: Տիկինը առանձին պիտի յայտ-
նէ ձեզ թէ այս գործողութիւնը բուն
իսկ իր կամքովը կըլլայ, դարձեալ կը-
սեմ չըլլայ որ մտքերնէդ անցունէք թէ
ո' եւ է մէկ բռնութեամբ է, ես պիտի
հեռանամ, առիթ տալով ձեզ, որպէսզի
աւելի համարձակ եւ ազատ խօսակցիք:

Այս խօսքերը ըսելով սենեակէն դուրս
ելաւ: Այնինչ Տօքթէօնը տիկնոջ հետ
առանձին մնացած էր սկսաւ երգումնե-
րով համոզել զայն որ ձեռքին վրայ
այդ տեսակ բարբարոսական գործ մը
կատարելու չթողու, հակառակ պարա-
գային առաջարկելով նաեւ իր աջակ-
ցութիւնը այն անձին դէմ, որուն ձեռ-
քը ինկած է:

Ձեք ինծի ցոյց տուած համակրու-

բոլոր Հայ արհեստաւորներու անուն-
ները, ոսկերիչ, կօշկակար, հիւսուա-
ծագործ, ամէնքն ալ իրենց ներկայա-
ցուցիչներն ունէին: Սա գիտողութիւնն
ընենք միայն որ, եթէ բաղդատութիւն
մը դնել հարկ ըլլար ներկայացող զա-
նազան ազգէ արհեստաւորներու մէջ,
առանց շօղիմիջով բռնուած ըլլալու,
պիտի կարողանանք ըսել թէ Հայ ար-
հեստաւորները բաց ի իրենց արհեստա-
կան նրբութիւնէն, նշանաւոր էին մա-
նաւանդ իրենց կիրթ ճաշակով: Ար-
գարեւ Պուլկար արհեստաւորները կար-
ծես ջանացած են իրենց արհեստին
կոշտ ու տափակ մասը միայն ներկա-
յացնել, բերելով այնպիսի առարկաներ
որոնք աւելի իրենց զանգուածին խո-
շորութեամբ աչքի կը զարնեն քան
արհեստական նրբութեամբ եւ կիրթ
ճաշակով:

• •

Քաղաքիս ազգ. վարժարանը վերջ-
նական ձեւ մը առաւ, որ սակայն հե-
ռու է գահացուցիչ ըլլալէ: Վարժարա-
նին բարեկարգիչ յանձնախումբը նկատի
առնելով պիւտեճէին անձուկ վիճակը
ինչպէս նաեւ գոյացած կարեւոր պարտ-
քը, որոշած է վերջապէս խոշոր ծախ-
քերու չի ձեռնարկել այս տարուան հա-
մար: Երբ հոգաբարձութիւն մը այս
տեսակ որոշում կուտայ անոր իմաստը
յայտնի է մեզ համար. այսինքն սպան-
նել վարժարանին բարոյական զարգա-
ցումը նիւթական գծուարութեանց չի
հանդիպելու համար, որովհետեւ անոնց
դէմ մաքառելու ուժը հաւասարապէս
կը պակսի մեր ազգային ամէն պաշ-
տօնեաներու:

Միակ օգտակար ձեռնարկը՝ դր բա-
րեկարգիչ յանձնախումբը կարողացաւ
կատարել, քաղաքիս համակրելի դէմ-
քերէն Տ. Լիւսի Սարգսեանը պաշտօնի
կոչելն է: Եւ սակայն անհաւ մը որ-
քան լարեմասնութիւններով ալ օժտը-
ւած ըլլայ, չի կրնար պահանջուած օգ-
տակարութիւնն ընձեռել երբ կաշկան-
դուած է անձուկ առնմանի մը մէջ եւ
պաշարուած թոյլ ու ապիկար անհատ-
ներէ որոնք ոչ թէ նոր ու առողջ դաս-
տիարակութիւն մը՝ կ'ուզեն մացնել
վարժարանին մէջ, այլ քանդուած ապա-
կանեալ դրութիւն մը վերականգնել:

• • (Շարունակելի)

Թեան համար մեծապէս շնորհակալ եմ—
ըսաւ կինը գերմաներէն լեզուով եւ
միեւնոյն օտար շեշտով զոր նշմարած
էր Տօքթէօնը այն սեւաշեւ պարտին
խօսքերուն մէջ: — Բայց շատ կը սխա-
լիք, եթէ կը խորհիք թէ ո' եւ է բռն-
ութիւն կը բանեցնեն իմ վրայ, դուք
սէն իմ վրաս ո' եւ է ճշդում ոչ կ'ըն-
դունիմ, ոչ ալ պիտի ընդունիմ եր-
բեք —, շարունակեց տիկինը, դիմովը
ետին նետելով իր սեւ ու գեղեցիկ
մազերը, աչքերը այնպէս սկսան փայ-
լիլ որ կարծես կայծ կը ցայտէին: —
Միմիայն իմ փափաքովս ու իմ կամ-
քովս է որ կուզեմ այս ձեռքը կտրուի:
Շատ անգամներ լսած եմ ձեր ճարտա-
րութեանը մասին եւ ապահով եմ որ
շատ ցաւ չպիտի պատճառէք ինձ: Ա-
սոր համար կ'առաջարկեմ, մի մերժէք այս
առթիւ ձեր ծառայութիւնը, մի թո-
ղուք զիս ձեր ուրիշ արուեստակիցնե-
րուն ձեռքը, որոնք թերեւս չունենա-
լով ձեզի չափ ճարտարութիւն, աւելի
պիտի չարչարեն զիս թերեւս կեանքս
ալ վտանգի ենթարկուի: —

Այս խօսքերը այնպիսի մի յուզուած
չեշտով մը կ'արտասանէր եւ անանկ
քաղցրութեամբ կ'աղերսէր, որ Տօք-
թէօն Ս. չըսարեցաւ թէ ինչ ընէ, —
տակաւին չէր կրնար որոշում մը տալ:

ԴԵՐԱՍԱՆԱՊԵՏ

ՏԻԱՐ ՖԱՍՈՒԼԵԱՃԵԱՆ

Ազգային թատերաբեմի պայծառ
աստղերէն մին ալ խաւարելու մօտ
է. դերասանապետ Տիար Ֆասուլ-
եաճեան իր երիտասարդութենէն
ի վեր, առաւել քան 40 տարիներ,
ինքզինքը հայկական թատերա-
բեմին նուիրելով, կենդանի գոյ-
ներով դրուատած է բարին ու ա-
ռաքինին, ձաղկած ու պարսաւած
է չարը ու մոլին և վերջապէս ըստ
կարի կրթած է հանդիսականաց
միտքը ու հոգին:

Տիար Ֆասուլեաճեան ոչ մի հա-
յու անձանօթ չէ կրնաք ըսել.
զի նա կ. Պօլսէն և Տիգրիսէն զատ
գաւառներն ալ երկար տարիներ
իր արհեստը ի գործ դրած ու հայ
մտքերը կրթած ու արտերը յուզած
է: Իր արհեստին մէջ ազգին մա-
տուցած ծառայութիւնը գնահա-
տելի է, մանաւանդ այն տեսակէ-
տով թէ նա իր ամբողջ կեանքը
այդ ասպարէզին մէջ խամրեցու-
ցած է, միշտ կէս անօթի վիճակի
մէջ:

Նստաւոր, իր ծերութեան օրե-
րուն, նիւթական ամեն միջոցներէ
զուրկ թոքային հիւանդութեան
մը ենթակայ կը տուապի Այսօս
գիւղաքաղաքի պուլկարական հի-
ւանդանոցին մէջ, զուրկ հայ ձեռ-
քերու խնամքէն, հայ ձեռքեր, որք
քառասուն տարիներ ընդերկար կը
ծափահարէին զինքը թատերաբե-
մին վրայ: Այժմ նա իրաւունք և
պէտք ունի այդ ձեռքերէն ուրիշ
բան մ'ակնկալելու, նիւթական
նպատակ մը, որով կարենայ իր հի-
ւանդութիւնը լաւագոյն եղանակաւ
զարմանել տալ:

Տիկին Ֆասուլեաճեան որ բաւա-
կան տարիներէ ի վեր իւր Երեւանի
նէն զատ կապրէր, կիմանաք թէ
կը պատրաստուի մօտ օրերս վառ-

— Բնեցեք բազմաբալս —, յարեց
տիկինը: — Հատապէս որ շատ հան-
դարտ է, ես այն ջղային կիներէն չեմ
որոնք ցաւէ կը վախնան, բայց դուք
եթէ միակ հիւանդ ձեռքերը կը կըտ-
րէք եւ ոչ թէ առողջները, ինչպիսի է
իմս, տեսէք ուրիշ —, ու սեղանին
վրայ գտնուած փոքրիկ, բայց անելի
պէս սուր դանակ մը առաւ:

— Աստուծոյ սիրուն կեցեք —, գոչեց
Տօքթէօնը, նետուելով անոր ձեռքե-
րուն վրայ, — չէք գիտեր թէ ինչ է
առողջ ձեռք մը կտրելը: —

— Շատ լաւ գիտեմ, որ գործողու-
թիւնը ձեր միջոցաւ կարելի պիտի ըլ-
լայ առանց ցաւի կատարել —, պատաս-
խանեց կինը, դանակը Տօքթէօնին
յանձնելով: — Անպատճառ այս գիշեր
կատարուելու է, եւ եթէ ոչ ձեր, գէթ
ուրիշ բժիշկի մը միջոցաւ, ուստի մի
մերժէք —, կը համաձայնէր:

Եւ առանց Տօքթէօնին պատասխանին
սպասելու, բացաւ դուռը եւ բարձր
ձայնով, — գործողութիւնը կ'սկսի —
ըսաւ: Յետոյ պառկեցաւ աթոռի մը
վրայ որ սեղանի մը մօտ կը գտնուէր,
վեր քաշեց ջրաղբեւտին թեւը եւ հան-
դարտօքն կ'սպասէր ստակալի գործո-
ղութեան սկսելուն:

Շատ չանցաւ, եւ ահա ներս մտաւ

նախ մէջ ներկայացում մը տալ ի նպատակ իւր լքեալ և զառամեալ ամուսնոյն : Կը յուսանք թէ հայ հասարակութիւնը իսկապէս պիտի քաջալերէ Տիկինին սոյն ձեռնարկը , որով փոքր ի շատէ պարտք մը կատարած կը լինի դէպի ազգային աշխատաւորն :

ՏԵՂԱԿԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տեղւոյս Թաղ. Խորհուրդոյ մեծամասնութիւնը հրաժարած լինելով՝ ազգային այս անկերպարան վիճակին վերջ մը տրուելու համար երկու անգամ ընդհանուր ժողով հրաւիրուած՝ եւ մեծամասնութիւն չգոյանալուն պատճառաւ որոշուած է հրորդ անգամ ըլլալով ի նիստ հրաւիրել ընդհանուր ժողովը՝ որ վերջնական կերպով տեղի պիտի ունենայ ըստ օրինի առանց մեծամասնութեան սպասելու ի 4 հոկտեմբեր 1898, կիրակի օրն ի ժամ 10 առաւօտեան յետ աւարտման Ս. Եկեղեցւոյ , արական սեռի ազգային վարժարանին մէջ : Բացակայք իրաւունք չպիտի ունենան տրուելիք որոշմանց դէմ բողոքելու :

Ուստի կը հրաւիրուին ամեն ազգայինք ներկայ գտնուիլ յիշեալ օրն ի նիստ իրենց ազգային պարտականութիւնը կատարելու համար :

Մնամ ազօթարար

Նախագահ Ընդհ. Ժողովոյ

ՄԱՐՏԻՈՍ ՓՆՅՆ. ՄԱՐՏԻՈՍԵԱՆ

Տէր հայրը սոյն ծանուցումով թաղային Ընդ. Ժողով կուգէ գումարել . այդ կը հասկնանք . բայց կըսէ թէ երկու անգամ ընդհանուր ժողով հրաւիրուած է ու մարդ չէ եկած . մենք բնաւ տեղեկութիւն չունինք թէ ասկէ առաջ հրաւիրուած է ժողովուրդը , զի ոչ եկեղեցւոյ մէջ ծանուցում եղած է և ոչ յայտարարութիւն փակցուած է . միայն աղօտ կերպիւ այսօր կը

այն պարոնը , որ քիչ առաջ Տօթթէօթը դիմաւորելով , գեղեցիկ տիկնոջ քովը դարձած էր , իրեն հետ կուգար պարոն մ'ալ , զոր բոխկը կը կարծէր թէ որսորդի հագուստ հագնողն էր , որ և կաւ դինքը պարահանդէսէն առնել ու հոս բերելու այս անգիւղի գործողութեան համար :

Ձիւս բռնելու համար մարդ պէտք չէ — ըսաւ տիկինը , երբ նշմարեց երկու պարոնները որոնք այս նպատակով իրեն կը մօտենային . Երկու պարոնները առանց բառ մ'արտասանելու աթոռին ետեւը քաշուեցան : Այն միջոցին Տօթթէօթը կը պատրաստուէր կէս մը մտադրադ : Յանկարծ սեւաչեայ պարոնը նետուեցաւ տիկինին ոտքերուն քով , բռնեց պատժապարտ ձեռքը եւ համբուրելով զայն կը թրջէր իր արցունքներով : Յետոյ ինքզինքին գալով նուրէն ելաւ և իր առջի տեղը քաշուեցաւ , այս միջոցին տիկինը ըսաւ Տօթթէօթին :

— Ժամանակ մի՛ անցնելու , պարոն բռնիչ սկսէ — :

— Անգամ մը եւս կը բողոքեմ այս գաղաղային անիրաւութեան դէմ — , գոչեց Տօթթէօթը , որովհետեւ ա'լ կը տեսնուէր որ գործը պէտք է վայրկեանապէս կատարուի , արդ բողոքովին

լսենք թէ՛ Տէր հայրը ժամակոյճը զրկած է մի քանի ընտրեալ աղա . ներու ականջին փսփսալու թէ եւ ընկոյին եկեղեցւոյ խուցը գան : Ուստի աւելորդ է ըսել թէ այս կերպ փսփսուքով եղած հրաւերը կամ ժողովը ոչ մի ազգային կամ պաշտօնական գոյն կարող է ունենալ :

Տէր հայրը , կ'երեւայ թէ այս ծանուցումովը ժողովուրդը անաւակալի բերել կուզէ , յայտարարելով միանգամայն , թէ Թաղ. Խորհրդոյ մեծամասնութիւնը հրաժարած է . արդէն թաղականները փոխանակ 7 ի 4 անգամով պաշտօն կը վարէին . բայց դեռ չի գիտցուիր թէ այս չորսէն ո՞րն է հրաժարողը . ընդհակառակը կ'իմանանք թէ Թաղ. Խորհուրդը իր պաշտօնին զուլսը կուզէ մնալ ի թէ իրեն գէ՛մ ումանք խոչնդոտներ հանելէ դադրին :

Սակայն և այնպէս , եթէ ստոյգ է թէ Թաղ. Խորհուրդը Ազգ. գործերն երեսի վրայ թողած է , ինչպէս կը տարածանալու , բնաւ փսփսուքի չէ որ անփոյթ թաղականներ ունենանք . ասոնք պէտք է ստանձնած պաշտօնին կամ լի ու լի կատարեն և կամ հրաժարին , որպէս զի աւելի փութկոտ և աւելի պարտաճանաչ անձնաւորութիւններ անցնին գործի զուլս , (եթէ կարելի ըլլայ) այսպիսիներ գտնել ու ընտրել) :

Բայց քանի որ Թաղականները այս օր չորս հոգի են ու վերջնականապէս իրենց հրաժարականը տուած չեն , և Տէր հայրն ալ կելլայ նոր Թաղ. Խորհուրդ ընտրելու ձեռնարկել , սա ուրիշ արդիւնք չունենար բայց եթէ նոր խռովութիւններու տեղի տալ :

Ուստի մեր կարծիքը այն է թէ վաղը հաւարուելիք թաղային Ընդ. Ժողովին առաջին գործը ըլլալու է

խելքը միտքը ժողովից , — ամենայն գիտակցութեամբ :

Մէկը պատասխան չտուաւ , անցան քանի մը վայրկեաններ ամենքն ալ կը լռէին , սենեակին մէջ մահուան լուսթիւն կը տիւրէր , այն ատեն տիկինը իւր գեղեցիկ տղերքը՝ Տօթթէօթին դարձնելով , ձեռքը սեղանին վրայ դրաւ :

— Սկսեցէ՛ք կ'աղաչեմ — :

Վերջապէս գործողութիւնը սկսաւ , սակայն Տօթթէօթին այնպիսի երկիւղ մը պատճառեց որ իր ամբողջ կենացը մէջ պիտի չկրնար մտքէն վանել : Երբեք չէր յիշեր ինքը որ հիւանդ մը այդչափ դիւրութիւն տուած ըլլայ այստեսակ գործողութիւն մը կատարելու : Առանց չարմիւր , առանց զգացած ցաւէն ձայն մ'իսկ հանելու , հանդարտօրէն կը սովոր գործողութեան :

Այն գեղեցիկ ձեռքը ա'լ կը պառկէր սեղանին վրայ իրանէն բաժնուած , եւ աղամանդեայ մատանին տակաւին ձեռքին վրայ ճրարէլ պէս չողողուն և գեղեցիկ փայլ մը կ'արձակէր չորս կողմը : Տօթթէօթը կապեց թելը , առաւ պէտք եղած հրահանգները եւ վշտաբեկ սրտով մը սրաճը բերաւ այն չքնաղ զոհը :

— Վաղը կրկին պիտի գամ — ըսաւ Տօթթէօթը : — Կապուածքը նայիմ ինչպէս կ'երթայ — :

արդի Թաղ. Խորհուրդէն բացաւ , տրութիւն ուղղութեան տեղւոյս Ազգ. գործերն ի՞նչ վիճակի մէջ են , և թէ իրենք պատրաստ են խղճի մտքը շարունակել իրենց պաշտօնն : Եւ ահա այս հարցումներուն պատասխանն է որ Ընդհ. Ժողովոյ առջև ուղի մը պիտի բանայ թէ ի՞նչ պարտի ընել , նորը ընտրել թէ հինին աշակցել :

Ն. Ա. Բարձրութիւն մեր բարեխնամ իշխանը չորեքշաբթի օր ժամը 3 1/2 ժ ատենները քաղաքիս Ստէտինէնիէ պարտէզին առջև գալով , իւր վսեմ . Եղբորը հետ կառքէն վար իջաւ ու Մուսալլաի հրապարակը պտոյտ մը ըրաւ : Իշխանը խիստ զուարթ գէմքով կը բարեւէր ժողովուրդը : Նոյն հրապարակի վրայ դանակագործ Մարտիրոս Սերովբեանի խանութը մտնելով վեց հատ սիրուն դանակներ գնեց . ուրկէ դուրս ելան ու պուկար ոսկերիչի մը խանութ հանգիպելէ վերջ յառաջացան իշխանական պալատին ոսկերչագետ Տիար Թովմէի Բարսամեանի վաճառատունը , ուր գնումներ և յանձնարարութիւններ ընելով քառորդ ժամու չափ մնացին . յետոյ անկէ ալ մեկնելով ուրիշ մէկ երկու վաճառատուններ ալ դիտելէ վերջ , սեղանաւոր Նապեանի խանութը մտան և հոս կէս ժամու չափ նստեցան : Իշխանները ի վերջոյ նաւամատոյց իջնելով էքսիւսկար գացին :

Ն. Ա. Բարձրութեան մասնաւորապէս հայ վաճառատուններն այցելելու այս բարեհաճութիւնը արդէն երաշխիք մ'է դէպի հայերը ունեցած իւր բարձր համարման :

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ Պուկար կառավարութիւնը վերջապէս բարեհաճած է

— Վաղը — , ըսաւ տիկինը ժպտելով , — Ձեմ յուսար որ զիս հոս գտնաք , նոյն իսկ յաջողիկ այս տունը գտնալու : Շատ չանցած պիտի մեկնիմ այս տեղէն , ուրիշ տեղ դարձան պիտի փնտռեմ : Ով գիտէ մեր աչքերը կրկին իրարու պիտի հանդիպին այս աշխարհի մէջ , արդ մի միակ արժանիք մը կը մնայ ձեզ , այն է թէ շատ յաջող կերպով ծառայեցիք ինծի եւ յաւէտ երախտապարտ եմ ձեզ :

Տօթթէօթին երկնցուց իր առողջ ձախ ձեռքը , զոր համբուրելով եւ առանց ժամանակ տալու որ յայտնէ իրեն թէ պատրաստ է ի հարկին ծառայելու , տիկինը բաժնուեցաւ անկէ , եւ այն պարոնը զոր քիչ մը առաջ տեսած էինք որսորդի հագուստով սենեակէն դուրս հանեց Տօթթէօթը եւ ինչպէս որ բերած էին տիկնոջ քով կրկին միեւնոյն կերպով ամենայն զգուշութեամբ դարձուցին զինքը բարիդ , մինչև իր տունը : Օտարականը Տօթթէօթին գործիքները մինչև տան դուռը բերելով մէկէն անհետացաւ , աղաչելով որ հաճի անմիջապէս գործիքներուն տուիլ բանալու : Ուր Տօթթէօթը մեծագումար արժէթով մը գտաւ :

Թ. Գ. Հինդլեան

արտօնել տարագրութեան մեր ընկեր Տիար Օննիկ Բարսեղեանի վառնա մուտքը : Նա շուրջ ինն երկար տիւններ քաղաքական պատճառաւ մը տարագրուած Օտեստի և Պիւքառէսթի մէջ տառապելէ ու տարուբերուելէ վերջ այս չորեքշաբթի օր քաղաքս ժամանեց ի մեծ ուրախութիւն իր լքեալ ընտանեաց :

Նա իր վերագարձը մասնաւորապէս կը պարտի քաղաքիս վսեմ . կառավարչին ու քաղաքապետին բարեհաջակութեանը որք վերջապէս բարեհաճեցան իրենց բարձր ազգեցութիւնը ի գործ դնել :

«ԻՐԱՒՈՒՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Մ. Չ. Բարիդ. — Տ. Յ. Պ. բացակայ է քաղաքէս , երկու շաբաթէն կը վերադառնայ :

Տ. Յ. Փ. — Պուկար. — Ձեր նամակը անիմաստ եւ միայն բառերու խճողում մը ըլլալով , չէր կարելի հրատարակել :

ՍԷՐՊԷՍՏԻՅԹ ԹԱՐԻԳԻ

Սարժմը լինելով տէ՛վէրանընտա , վէպա խուսուս շու սո՛ն սենէլէրտէ մաղտուրիյէթ վէ զուլմ ալթընտա էզիլմէքտէ օլան միլլէթլէրի զալիմին բէնչէսինտէն գուրթարան սէպէպլէր՝ պիլա իսթիսնա տիյէպիլիլիքի՝ պէօյիւք տէվլէթլէրտէն պիլիլին վէ եախօտ պիլ դաչընըն մէնֆաալլարտան վէ թամա հընաան իլէրի կէմիլչէր տիլ . պուռնու աքսինի ըսպաթ իթմէք բէք զօր տըր : Վագաա պազը մուհարրիլէր տէմէք իսթէրլէր քի Շարգտա թիւրքիւն բէնչէի զուլմընտան գուրթուլան միլլէթլէր , քէնտի ճէսուրլըզլարը վէ գահրամանըզլարը սայէսինտէ եագայը գուրթարտըլար : Խայըր . պիլպու էֆքիարալ աալա իլթիւրաք իտէմէլիք . զիւրա ասըմըզըն թէվարիլի աքսինի ըսպաթ իթմէքտէ տիլ : Էն եագըն , Պուկարլաւըն սէրպէստիյէթ պուլմալարը 100 տէ 90 ռուս տէվլէթիլին թէշվիլի , եարտըմը վէ նիհայէթ պինլէրճէ ռուսլարըն դանը պէհասը իլէ օլմըլ տըր : Պուկարիա սէրպէստիյէթ պուլմազտան էվիլէլ , պուկար չիլօլար իսպըլ զաֆլէթտէ ուլուր իքէն , ռուս գօնսօլուսլարը սանտըզլարլէ թիթապլար վէ թէշվիլիքաթը մէմուրլար քէօյտէն քէօյէ տաղըտուպ էհալիլի ուլանտըմըլ , վէ մաալլէ պուկար մէմուրլար թուլթուպ , գօմիթլէր թէշքիլ իթիլմիլլէր տիլ . պիլպու մէմուրլարըն պազըլարը իլէ շախսէն գօնուլմուլ վէ դանաաթ հասըլ իթմիլիլ :

Պու հագըգաթըն աքսինի իտաա իտէնլէրէ էն եագըն պիլ նուլմանէ տահա իպրազ իթմէք իլիւն կիլիլիտին շու 3-4 սէնէլիք հալիլի բիֆայէթ իտէր : Չափալը կիլիլիտ խիլթիլիլանլարը իլթիլալ պայրաղըն չէքէրէք , սէնէլէր

սէլ կիպի գան տէօքտիւէր, էօլ-տիւէր վէ էօլտիւտիւէր, հատ-տա արգալարընտա, քէնտիւէրին թէշվիգ իտէն վէ գուվիթ վէրէն պիր Եունանիսթան տախի վար ըտը, վէ պու հէրպիր ֆէտաքեար-լըղա հազըր ըտը, նապըլքի կէշէն սէնէ, պու սէպէպլէ մուհարէպէ թէշվիգէսինէ տախի աթըլտը վէ քէմալը մաղլուպիյէթլէ տիլի իւս-թիւնէ օթուրմայա մէհպուր օլտը-ֆազաթ կիրիտին հալի ապլա թէպտիլ օլմաթը. զիրա Եունան-լըղալըն հիմայէսի քեաֆի տէկիլ-տի, Եունանլըղա պիր միլլէթի պիր էյալէթի գուրթարմազ իգ-թիտալընա վէ սէլահիթիինէ հա-լիլ տէկիլէր իտի, ասըր հազըր-տա պէօլիւք տէվլէթլէր պու հազ-գը Եունանլը քէնտիւէրինէ սազլա-մըշար տըր: Սէֆիլ Բուվար հէմ կիրիտտէ, հէմ թէհալիաաա վէ հէմ տէ Եպիրոստա պիւլէրէնէ գուր-պանլար վէրտիլէր, ֆազաթ պու գուրպանլարա, սէլ կիպի ագան գանլարա էվրոքա ատի սէյիթի կիպի պագուպ, օմուզլարընը սիւք-մէքտէն պաշգա պիր շէյ իթմէտի, Եունանլը Եունանիսթանը մալիյէ-սինի պիր նէվ սէքվէսթիօ ալթընա ալտը վէ էպքի մաթլուպլարընը տախի սաղա բինտիրտի, զիրա էվրոքանըն մէնֆաթը Եունանլը օ' նօթմատա ըտը, տէօքիւլէն գանլար իսէ Շարգ խրիսթիան-լարըն գանը օլտըղընտան, քէնտի-լէրին նազարընտա էհէմմիյէթի Եօք տը:

Ֆազաթ ախիթէն Գանտիաաա վուգուլա կէշէն իսթիլալ ու գաթ-թալ մատտէն պէօլիւք վէ մանէն քէք քիչիլք տէվլէթլէրի սարստը ու թիթիլէթտի. զիրա պու տէ-ֆա Գանտիաաա տէօքիւլէն գանըն ընէկի պաշգա՝ ըտը. օրատա էվ-րոքալը գանը տախի գարըշմը ըտը. Եունան վէ ալազ ալթընա կիտէն Եունանլը քիլիսէլէր վէ մու-գատտէն էհալար տէկիլ տի, օրա-տա գօնսուլահանէլէր վէ պանտէ-րալար տախի վարտը. պինտէն ա-լէյհ էվրոքա զայըր պուլնա թէ-հէմմիլ իտէմէզ տի, պանտէրալա-ըն (պիր գաշ արշըն պէզին) նա-մուլընա մոգանըլմըշ տը, հէր հալ-տէ թիւրքլէրտէն պուլնու ինթի-գամընը ալմազ ֆարգ տըր. զայ-ըր օ' ճիվարտան թիւրքլէրի սիւ-մէք սիւքիւրմէք լաղըմ ըտը. կի-րիտ մէսէլէսի պու հալա կէշէն-կինի, պիլ՝ Գանտիա վուգուլաթը ագէպինտէ չու Եօլտա Եունանլը տըգ. «որովհետեւ կրէտէի բազ-նին վրայ Եւրոպական փրկարար նոխաղը զոհուեցաւ ալիւս զայն սրբիլ ու սրբացնել պէտք է: Կը-րիտաղը փրկութիւնը մօտ է: »

Իշթէ սէնէլէրին տէվլէրանը իլէ պինլէրէնէ գուրպանլար սէմէրէսիգ գալմըշ օլտըղը հալտէ, պիր գաշ էվրոքալընը գանը վէ պիր գաշ արշըն պէզին (պանտէրա) Եունանլը մասը սայէսինտէ պիր ալ գար-ֆընտա կիրիտ մէսէլէսի հալ օ,

լընտը. Սուլթան իթաաթ իթմէ-կէ մէհպուր օլտը. վէ թիւրք ա-քէրի վէ մէմուրլարը առատան չէ-բիլիօրլար:

Էվրոքա տէվլէթլէրին պու տէ-րէնէ խօսալիլիք (Եունանիսթան) նուամէլէրի կէօղիւմիլիւն էօ-կիւնտէ օլտըղը հալտէ, անլէրին բօլիթիգալընը միւսաիտ վաղթը-նա ինթիլար իթմէյուպտէ, էհա-լիյի Եէնիտէն ալթէշլէր իշինէ սէվգ իթմէկէ չալըշան պաղը մէնֆաթ-բէրէսթ (չահաղէտ) մուհարըրլէ-րիմիլին հալի նէ՝ գատար մուհի-պի թէէսիւֆ տիր. Պու նէվ մէն-ֆաաթբէրէսթլէրտէն պիրի կէշէն-լէրտէ Եազար ըտը. «պիլ էվրո-քա բիլիթիգալընը Եունանլըղ քի օնլար պիլի հիմայէ իթմէկէ մէհպուր օլտընլար. » մէնֆաթբէ-րէսթիւք բէրտէսի պու կիպիլէրին կէօղլէրի օլ տէրէնէ քէօր իթմիշ քի զայըր հիշ պիր շէյ կէօրմէք իսթէմէլէր: Պիլ օ' կիպիլէրէ տէրիլ. — Եունանլը, էվրոքա բօլիթի-գատար արշընը 30 բարալըգ ա-տար տէկիլ քի Եունանլըն. տուհա տիւն Եունանիսթան՝ օրտուսը, թօքու վէ տօնանմալարը իլէ օանը Եունանլը վէ թէսիւֆէն քէն-տիսի Եունանլը. պիլ իսէ Եիւլ-պիլիլէրէ գուրպանլար վէրտիք, զայըր միւտէպլիւրանէ վէ ֆըր-սաթտան իսթիֆատէ իտէպիլմէք թարիլիլէ տալմանմալըղ, էն էվլէլ համիմիլի ինթիլիապ ու թէշլիս իթմէլիլիլ, գուվլէթի-միլի ագիլանէ թէնէմմիլ իտուպ, միւսաիտ սաաթտա ֆըրսաթը էլ-տէն գալըրմաադ իշին հազըր-լըգ կէօրմէլիլիլ. զայըր սիլիլ թարաֆիլիլիլ վէ բարթիլանլըգ նաղմէլէրինիլ պիւթիւն միլլէթի պըգտըր տը:

ԿԻՐԻՏ

Կիրիտ խրիսթիանլարը օսման-լըլարըն գուլմընտան գուրթըլտը-լար:

Տէօրթ տէվլէթլէրին Պապը Ա-լիյէ վէրմիշ օլտըղը իւլթիմաթօմա ճէվապէն, խարիծիլէ նաղըրը տէօրթ սէֆաթէթհանէլէրէ պիլ-տիրտիքի, Սուլթան թիւրք ա-քէրիլէրին կիրիտտէն չըգալարը պապընտա տէվլէթլէրին թէքի-ֆինի գապուլ իթմիշ տիր. Ֆա-գաթ պուլնլարըն վաալարը իւզրէ Սուլթանըն հաքիմիլիլիլ առատա պաղի գալմալը տըր (Իսմէն), վէ պու մագսէտլէ առանըն պիր նօգ-թասընտա պիր ալալ մուհաֆըգ աքէրի գալմասընը թէքիլիլ ու ընէա օլտընը:

Էլիլէր Սուլթանըն պու ընէա-սընը մէնսուպ օլտըղլարը տէվլէթ-լէրէ պիլտիրտիլէր վէ թալիմաթ իսթէտիլէր:

Նիհայէթ սօն թէլէկրաֆ պիլ-տիրիօր քի, տէվլէթլէր Սուլթա-նըն սօն թէքիլիլիլ տախի ընտա իտուպ, առատա ալալ թիւրք ա-

քէրի պուլընմայաճաղընը ամիրալ-լար պէյան իտէյօլլար, զիրա տէ-յօլլար, առատա թիւրք աքէրի պուլընմանըն սէմէրէսի Գ. անտիա-ա ս կէօրիւնտիւ:

Պապը Ալի կիրիտի թալիլիյէ իթմէք իշին էմր վէրտի:

Աքէրիլէրին նաղլի իշին կէլէ-ճէք օլտէ թիւրք վապիթլէրին վէ գօմանտանլարըն գարայա չըգա-լարըն մէնն իթմէք իշին տալ-լալար գարար վէրտիլէր: Վէ ա-քէրիլէրէ պէրապէր թիւրք մէմուր-լարըն չըգալարը խուսուսընտա Սուլթան հիշ պիր մանա վէրմէմիշ օլտըղընտան, մէսէլէնին գալթիլէն պիլթմիշ նաղարը իլէ պագըլմա-նը ամիրալար մէնսուպ օլտըղլա-րը տէվլէթլէրինէ թիւքիլիլ թիւթի-լէր:

Էվրոքա աքէրիլէրի իսթիլալը թիւրքլէրտէն Եէնիտէն 30 քիշիի տէրտէսթ իթտիլէր:

Ճէվաա բաշա Սթանպուլա կիթ-տի:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Ֆրանսանըն մէճիսի մէպուսանը ալըն 13 ինտէ ալըլուճադ տըր:

Մ. Էմիլ Զօրանը իճրա մէմու-րընտան հաճ ղընմըշ օլտէ էշիա-լարը մէղաթա չըգարտըլար իսէ տէ, Մ. Ֆիլիքս նամ պիր զալթ պիր մաստը 32,000 ֆրանգա ա-լուպ, պու մէպաղ Զօրանըն ճէ-լալի նագաթիլէսինէ քիֆայէթ ի-տէնէկինտէն, էշիալարըն սաթըլ-մասընա լիւզուլ վալմամըշ օլմալը:

— Սըրպ գըրալը վիէննաաա իմբէրաթօր իլէ միւլազաթտան սօնրա Պէլլարաաա ալտէթ իթտի: Գրալ պիր նութգ իրաա իտուպ, վիւքէլանըն տէկիլիլէնէկինէ տաիր կէլէն շայէալար էսաալը օլտըղը-նը, վէ հիւքիւմէթի հաղըրէյէ քէնտիսինին էմիլիլիլ քեամիլէսի պուլընտըղըն սէօլլէմիշ տիր:

— Սըրպ հիւքիւմէթի քէնտի էլիլիլէրինէ էմիր վէրէնէք քի, սաիր մէմալիքտէ պուլընաա անարշիսթ-լէրին լիսթասընը ալսընլար, վէ պու Եօլ իլէ անլէրին Սիւպիայա տուլուլիլիլ մէնն իթտին:

— Ալմանիա իմբէրաթօրը կիլ-Եօմ զէվճէսի իլէ պէրապէր վիէն-նաաա կէշուպ, վէնէտիկէ կիթ-միշ տիր: Պու միւնասէպէթլէ ի-թալիա Գրալը վէ Գրալիցաա վէ վիւքէլա ըլիլի կիլիօմը գապուլ իթմէք իշին վէնէտիկէ միւթէ-վէնէհիլէն հարէթէթ իթմիշ տիր:

— Իշիլէրին թաթիլիլէն վէ վէլ-վէլէսինէ նիհայէթ վէրէպիլմէք խուսուսընտա Բարիսին Պէլլար-յէ վէ իտարէ մէճիլիլիլ միւլէ-քէրէլէր իտուպ, վիւքէլա ըլիլիսի Մ. Պրիսօն իլէ կէօրիւլէրէք պա-ղը թէպալիլէրէ իշին էօնիւ ա-լընաաղը մէմուլ օլտընլար:

ԶԱԽԻՐԷ ԲԻԱՑԱՄԸ

Վառնա, 2 հոկտեմբեր
Պուլսայ
Վալիլի, լիպրա 55-58 հէք 9. 60-10. 70 ֆ
Արալա, 55-60 հէքթ. 10-12. 40,
Արալ
Լիպրա 42-50 հէքթ. 5. 40-5. 60 ֆր.
Ֆասուլիս
100 օգ. 18-22 ֆր. մալընա կէօրէ:
Եուլսթ
Արալա 20-25. ֆիլաթ 5-5. 30 ֆր.
Տարր
Արալա 5-6. լիպրա 58-60. ֆի. 4. 60-5.
Կիւնտէ 150-200 արապա վէ 25-30
վալիս պուլտալ, 70-80 արապա ար-
բա կէլմէքտէ տիր:
Ֆասուլիս 8-10 արապա:
Արալա մուամէլէսի նաթլէօն 21 ֆր.
հիսապը իլէ:

ՄՈՒՅԻՍ ԻԼԱՆ

ՍՐԹԷՉ ԳՈՒՅՈՒՍԸ

Պագէ, ալիսանէ վէ սայիր հէր պիր մահէլտէ, հէր նէ տէրինիլք-տէ իգթիլա իտէր իսէ՝ պրկու ու-սուլի իլէ սու գուլուսը ալըլըր, պինալարա ալա զարար վէ նէմ-լիք վէրմէլ: Պու գուլուսար գալ-վէթիլ վէ տայանըղը թուլուլա-լար գօյուլուպ, սէնէլէրէնէ պօղու-լազարըն իսթիմալ օլտընլար: Սու չէքմէք բէք գօլալ օլուպ, իր վէ գօֆա իգթիլա իթմէլ:
Ֆիլաթլար գալէթ ուլիւն. թաֆսիլաթը իզահաթ ալմազ ի-շին Տէմիրճի Հաճի Տիգրան Ա-լազեանըն տիւքեանընա միւրա-ճաաթ իթմէլիլ: 4-10

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

Ա. Թաղ «Քնեսաքա» փողո-ցին մէլ Տիար Թօմա Տիմիթրօֆի 400 թիւ տունին տակը գտնուող խանութը վարձու կը տրուի: Փա-փաքողները թող գիմեն տանտի-րովը: 4-9

ՏՊԱՐԱՆ

ՔՐԱԿՈՒՆԵՐ ԼՐԱԳՐՈՅ

Լրագրիս վերջին երեսի սիւ-նակներուն մէջ օտար լեզուներով ալ ազդեր կը զետեղուին: Ա-ռանձին կը տպագրուին գրքեր, տետրակներ ու կը պատրաստուին հայերէն, պուլկարերէն, ֆրան-սերէն եւ յունարէն լեզուներով ընկալագիրք, հասցէներ, հար-սանեաց եւ ալ հրաւերագրեր, այցաքարտ եւ ալն:

ԴՆԵՐ ՉԱՓԱՒՈՐ

Փափագողք պարտին դիմելը մ-բազրուլեան հասցէին:

«ԱՐԵԻԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ» Նար քաղաք ԲՈՒՍ ԶՈՒՐ

Սիմիօնօֆի դրամատան զէմ գտնուող նախկին «Մասիս» շէն-քին մէջ, ուր կը պատրաստուին տան խահանոցի յատուկ մաքրու-լծեամբ համադամ կերակուրներ եւ անուշեղեններ չափաւոր գինե-րով: Փորձելը ստուգել է:
Բաժանորդագրութիւն կ'ընդուն-ուի գիւրամատչելի պայմաններով:

Отговорникъ М. Сконовъ
Печатница „Взаимность“—Варна